ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.5/12011-2026

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Կ-1254-09.02.2026-ԱՌՀ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները՝ լրամշակված նախագիծը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքը՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար:

Առաջարկում ենք՝

1. Օրենքի նախագծի 3-րդ հոդվածով՝ նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետում «5-րդ և 6-րդ» բառերի փոխարեն լրացնել «4-րդ և 5-րդ» բառերը:

2. Նախագծի 4-րդ հոդվածով նախատեսվող՝ նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 32.1-ին հոդվածի 3-րդ մասի 2-րդ, 4-րդ մասի 2-րդ և 5-րդ մասի 2-րդ կետերի ձևակերպումները վերանայել՝ ապահովելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ 4-րդ հոդվածով նախատեսվող նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 32.1-ին հոդվածի 3-րդ մասի 2-րդ, 4-րդ մասի 2-րդ և 5-րդ մասի 2-րդ կետերը խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝

ա) նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 32.1-ին հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետ՝

«2) բարձրագույն կրթություն և հանրային առողջության և առողջապահության

կազմակերպման, առողջապահության կառավարման ոլորտի հետավարտական մասնագիտական կրթություն և ղեկավարման բնագավառի առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ առողջապահության ոլորտում կամ»,

բ) նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 32.1-ին հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետ՝

«2) բարձրագույն կրթություն և հանրային առողջության և առողջապահության կազմակերպման, առողջապահության կառավարման ոլորտի հետավարտական մասնագիտական կրթություն և առողջապահության ոլորտում ղեկավարման առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ»,

գ) նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 32.1-ին հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետ՝

«2) բարձրագույն կրթություն և հանրային առողջության և առողջապահության կազմակերպման, առողջապահության կառավարման ոլորտի հետավարտական մասնագիտական կրթություն կամ»:

3. 7-րդ հոդվածի 2-րդ մասում «իրավական ակտը» բառերի փոխարեն լրացնել «ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ